Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 623 - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Մայր Տաճարի նորոգումը: Ծրագրի իրականացման ընթացքում պետք է հիմնովին վերանորոգվի կառույցի հիմքերը, պատերը, տանիքը, գմբեթները, պետք է կատարվի ներքին հարդարման աշխատանքներ, որմնանակարների վերականգման աշխատանքներ, Տաճարի շրջակա տարածքի բարեկարգում, ծիսական պարագաների համալրում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4.	Ծրագիրը կատարողը	Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, ՀՎՀՀ 04703401:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Հոգևոր՝ եկեղեցաշինական:
6.	Ծրագրի բյուջեն	4.123.794.000 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	11 հուլիս, 2017 թ. – 31 դեկտեմբեր, 2023 թ.:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Մայր Տաճարի նորոգում, ամրակայում բակի բարեկարգման աշխատանքներ, ծիսական պարագաների համալրում, որի ընդհանուր գումարը կազմում է 4.123.794.000 դրամ: 1. Վերնաշերտային տեխնածին գրունտային ջրերից Մայր Տաճարի պաշտպանության և ամրակայման շին աշխատանքներ - 145.965.570 դրամ: 2. Արտաքին պատերի նորոգման և ամրակայման շին. աշխատանքներ - 63.400.000 դրամ: 3. Կենտրոնական գմբեթի նորոգման և ամրակայման շին. աշխատանքներ - 328.030.000 դրամ: 4. Ձանգաշտարակի նորոգման և ամրակայման շին. աշխատանքներ - 502.334.430 դրամ: 5. Ներքին ամրակայման, նորոգման և հարդարման շին. աշխատանքներ - 638.266.000 դրամ:

		6. Ներարկման աշխատանքներ - 198.232.000 դրամ: 7. Ներքին Էլեկտրամատակարարում - 55.462.000 դրամ: 8. Արտաքին և ներքին լուսավորություն - 207.042.000 դրամ: 9. Թույլ հոսանքներ, ակուստիկ համակարգ, տեսանկարահանման համակարգ, ներքին ցանց, հեռարձակման կայանի միացում - 184.482.000 դրամ; 10. Հակակողոպուտային և հակահրդեհային համակարգ- 25.834.000 դրամ: 11. Բակի ամբողջական բարեկարգում և լանդշաֆտային աշխատանքներ - 874.720.000 դրամ: 12. Արտաքին մալուխագծի անցկացման աշխատանքներ - 35.540.000 դրամ: 13. Օդափոխություն, սառնամատակարարում և ջեռուցում - 269.232.000 դրամ: 14. Անկյունային սրահների, թաղերի և տանիքների նորոգում և ամրակայում - 322.784.000 դրամ: 15. Գոյություն ունեցող թանգարանի մի մասի ձևափոխումը ավանդատան - 103.908.000 դրամ: 16. Ներքին կահավորում (նստարաններ, ջահեր, պահարաններ, գրադարակներ և այլն) և ծիսական պարագաներ (գրակալներ, մոմակալներ, Սուրբ Խորանի վարագույրներ, քշոցներ, բուրվառներ և այլն) - 118.562.000 դրամ: Կատարվելիք շին. աշխատանքների գումարը կազմում է 3.523.794.000 դրամ՝ ներառյալ չնախատեսված ծախսերը 50.000.000 դրամ, իսկ 600.000.000 դրամ գումարի չափով նախատեսվում է նյութերի և սարքավորումների ներմուծում: Ընդհանուր աշխատանքների գումարից (որը կազմում է 3.523.794.000 դրամ) 1.448.335.670 դրամ գումարի չափով շին. աշխատանքները կատարվում են Հորիզոն 95 ՍՊԸ –ի հետ կնքված 10Շ/017 պայմանագրի հիման վրա: Հորիզոն 95 –ի կատարած փաստացի աշխատանքի գումարը ըստ 02.06.2022 թ. ներկայացված կատարողական ակտի կազմում է 1.110.394.410 դրամ:
10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Մայր Տաճարի նորոգում, ամրակայում, ներքին հարդարում, բակի բարեկարգում, որի ընդհանուր գումարը 4.123.794.000 դրամ: Կատարվելիք շին. աշխատանքների գումարը կազմում է 3.523.794.000 դրամ, ներառյալ չնախատեսված ծախսերը 50.000.000 ՀՀ դրամ Նյութերի և սարքավորումների ներմուծում 600.000.000 դրամ գումարի չափով
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր նախատեսված չեն

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավար-ման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	չի նախատեսվում
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

02.09.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ